# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզի Սարչապետ համայնք, գ. Սարչապետ,
Հեռ. (077)867459 , sarchapet.lori@mta.gov.am

N 246/36-17
*29 դեկտեմբեր 2017թ.*

**ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**
**ՄԱՐԶՊԵՏ**
**ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ**

Կից Ձեզ եմ ներկայացնում Սարչապետ համայնքի ավագանու թիվ 9-15 որոշումները իրենց հավելվածներով և համայնքի ղեկավարի թիվ 6-Ա և 7-Ա որոշումները:

Առդիր՝ 15 թերթ:

**Համայնքի ղեկավար՝** **Բորիս Բարոյան**

*Կատ.* '

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 sarchapet.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N-9-Ն

ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով՝ ***ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.***

Հաստատել Սարչապետ համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 02 նիստի հետևյալ օրակարգը՝

1.Սարչապետ համայնքի <Պարտեզ> ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի տնօրենի վարձատրության չափի, աշխատակազմի աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի հաստատման մասին: (Զեկ.Ս.Բարսեղյան)

2.Սարչապետի համայնքապետարանի և նրա ենթակայության մշակույթի տան ու <Պարտեզ> մանկապարտեզի գույքի հաշվառման փաստաթղթերի հաստատման մասին: (Զեկ.Ս.Բարսեղյան)

3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնքում 2018 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակները դրույքաչափերը սահմանելու մասին: (Զեկ.Ա.Մարտիրոսյան)

4. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնքի 2018 թվականի բյուջեն հաստատելու մասին: (Զեկ.Ս.Բարսեղյան)

5. Սարչապետ համայնքի ավագանու մշտական հանձնաժողով ստեղծելու և դրանց կազմը հաստատելու մասին: (Զեկ.Ա.Մարտիրոսյան)

6. Սարչապետ համայնքի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի կազմում ընդգրկվող ավագանու անդամների քանակական և անհատական կազմի մասին: (Զեկ.Ա.Մարտիրոսյան)

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԴԱԼՅԱՆ ԲԱՐՍԵՂ
2. ԱՎԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ
4. ԳԻՆՈՅԱՆ ՄԿՐՏԻՉ
5. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԱՐԳԱՐ
6. ԴԱՎԹՅԱՆ ԳԵՎՈՐԳ
7. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՌԱՖԻԿ
8. ՄԽՈՅԱՆ ՁԱՎԵՆ
9. ՏՈՄԵՅԱՆ ՀՈՎԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 sarchapet.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N-10-Ա

ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ «ՊԱՐՏԵԶ» ՆՈՒՀ ՀՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԻ, ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով և <Իրավական ակտերի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով՝ ***ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.***

1.Հաստատել «Պարտեզ» նախադպրոցական ուսումնական համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի վարձատրության չափը, աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Սարչապետ համայնքի ղեկավարի 2016 թվականի նոյեմբերի25-ի < «Պարտեզ» նախադպրոցական ուսումնական համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի վարձատրության չափի, աշխատակազմի աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի հաստատման մասին> թիվ 81-Ա որոշումը:
3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԴԱԼՅԱՆ ԲԱՐՍԵՂ
2. ԱՎԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ
4. ԳԻՆՈՅԱՆ ՄԿՐՏԻՉ
5. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԱՐԳԱՐ
6. ԴԱՎԹՅԱՆ ԳԵՎՈՐԳ
7. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՌԱՖԻԿ
8. ՄԽՈՅԱՆ ՀԱՎԵՆ
9. ՏՈՄԵՅԱՆ ՀՈՎԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ**

Հաստատված է
ՀՀ Լոռու մարզի Սարչապետ
համայնքի ավագանու
2017թ. դեկտեմբերի 29-ի թիվ 10-Ա որոշմամբ

# Սարչապետ համայնքի <Պարտեզ> նախադպրոցական ուսումնական համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի վարձատրության չափը, աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 6
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| Հ/Հ | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը /դրույք/ | Ամսեկան պաշտոնային դրույքաչափը /հազ. դրամ/ |
|---|---|---|---|
| 1. | *Տնօրեն* | 1 | 120 000 |
| 2. | *Դաստիարակ* | 1 | 87 000 |
| 3. | *Դաստիարակի օգնական* | 1 | 85 000 |
| 4. | *Հաշվապահ* | 1 | 72 752 |
| 5. | *Խոհարար* | 1 | 72 752 |
| 6. | *Տեխաշխատող* | 1 | 72 752 |

Սույն պաշտոնական դրույքաչափերը գործում է 01.01.2018թ.-ից:

Համայնքի ղեկավար՝ Բորիս Բարոյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 sarchapet.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N-11-Ա

### ՍԱՐՉԱՊԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ՆՐԱ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ՈՒ <ՊԱՐՏԵԶ > ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԳՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 32-րդ մասով՝

***ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.***

Հաստատել Սարչապետի համայնքապետարանի և նրա ենթակայության մշակույթի տան ու <Պարտեզ> մանկապարտեզի 2017թ. նոյեմբերի 17-ից դեկտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում հաշվառված գույքի ապրանքանյութական արժեքների ցուցակները:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԴԱԼՅԱՆ ԲԱՐՍԵՂ
2. ԱՎԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ
4. ԳԻՆՈՅԱՆ ՄԿՐՏԻՉ
5. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԱՐԳԱՐ
6. ԴԱՎԹՅԱՆ ԳԵՎՈՐԳ
7. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՌԱՖԻԿ
8. ՄԽՈՅԱՆ ՀԱՎԵՆ
9. ՏՈՄԵՅԱՆ ՀՈՎԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 sarchapet.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N-12-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ և 19-րդ կետերով, <Տեղական տուրքերի և վճարների մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ հոդվածներով և <Իրավական ակտերի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով՝

***ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.***

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնքում 2018 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակները, դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԴԱԼՅԱՆ ԲԱՐՍԵՂ
2. ԱՎԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ
4. ԳԻՆՈՅԱՆ ՄԿՐՏԻՉ
5. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԱՐԳԱՐ
6. ԴԱՎԹՅԱՆ ԳԵՎՈՐԳ
7. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՌԱՖԻԿ
8. ՄԽՈՅԱՆ ՋԱՎԵՆ
9. ՏԻՄԵՅԱՆ ՀՈՎԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ**

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Սարչապետ համայնքի ավագանու
2017 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 12-Ն որոշման

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

### ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ

**1)** Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

**ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝**

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 5000 /**հինգ հազար/ ՀՀ դրամ**,

**բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝**

- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 20 000 /**քսան հազար/ ՀՀ դրամ,**
- 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 40 000 /**քառասուն հազար/ ՀՀ դրամ**,
- 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50 000 /**հիսուն հազար/ ՀՀ դրամ**,
- 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 100 000 /**մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ**.

**գ. ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝**

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շինությունների համար՝ 1500 /**մեկ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ**,
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շինությունների համար՝ 2500 /**երկու հազար հինգ հարյուր/ ՀՀ** դրամ.

**2)** համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1500 /**մեկ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ**,

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական

նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

**3)** համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ 5000 /**հինգ հազար/ ՀՀ դրամ.**

**4)** համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 100 000 /**մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ**.

**5)** համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 20 000 /**քսան հազար/ ՀՀ դրամ.**

**6)** համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 50 000 /**հիսուն հազար/ ՀՀ դրամ.**

**7)** համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

**ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝**

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **7000 /յոթ հազար/ ՀՀ դրամ,**
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10 000 /**տաս հազար/ ՀՀ դրամ,**
- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **15 000 /տասնհինգ հազար/ ՀՀ դրամ,**
- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20 000 /**քսան հազար/ ՀՀ դրամ,**
- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 30 000 /**երեսուն հազար/ ՀՀ դրամ,**
- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 50 000 /հիսուն հազար/ ՀՀ **դրամ.**

**բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝**

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **3000 /երեք հազար/ ՀՀ դրամ,**
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10 000 /**տաս հազար/ ՀՀ դրամ,**
- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **15 000 /տասնհինգ հազար/ ՀՀ դրամ,**
- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20 000 /**քսան հազար/ ՀՀ դրամ,**
- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 30 000 /**երեսուն հազար/ ՀՀ դրամ.**
- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **50 000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ.**

**8)** համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ 350 /**երեք հարյուր հիսուն/ՀՀ դրամ՝** մեկ քառակուսի մետրի համար.

**9)** համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ 40 000 /քառասուն հազար/ ՀՀ **դրամ**,
բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 70 000 /**յոթանասուն հազար/ ՀՀ դրամ**,
գ. բաղնիքների (սաունաների) համար՝ 300 000 /**երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ**,
դ. խաղատների համար՝ 900 000 /**ինը հարյուր հազար/ ՀՀ դրամ,**
ե. շահումով խաղերի համար՝ 300 000 /**երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ**,
զ. վիճակախաղերի համար՝ 100 000 /**հարյուր հազար/ ՀՀ դրամ**.

**10)** համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

**ա. հիմնական շինությունների ներսում՝**

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **3000/երեք հազար/ ՀՀ դրամ,**
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 7000 /**յոթ հազար/ ՀՀ դրամ,**
- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 11 000 /տասնմեկ հազար/ ՀՀ դրամ,
- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 20 000 /**քսան հազար/ ՀՀ դրամ,**
- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 30 000 /**երեսուն հազար/ ՀՀ դրամ**,
- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 50 000 /**հիսուն հազար/ ՀՀ դրամ**.

**բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝**

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 500 /հինգ հարյուր/ ՀՀ դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1500 /մեկ **հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ,**
- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3000 /**երեք հազար/ ՀՀ դրամ**,
- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 7000 /**յոթ հազար/ ՀՀ դրամ**,
- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10000 /**տաս հազար/ ՀՀ դրամ,**
- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 20000 /**քսան հազար/ ՀՀ դրամ.**

**13)** ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 /**երկու հազար/ ՀՀ դրամ**,
բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3500 /**երեք հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ**,
գ. սոցիալական գովազդի համար՝ 0 /զրո/ ՀՀ դրամ,
դ. այլ արտաքին գովազդի համար՝ 1500 /**հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ**,

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով՝ 375 /երեք հարյուր յոթանասունհինգ/ ՀՀ դրամ,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով՝ 150 /մեկ հարյուր հիսուն/ ՀՀ դրամ.

**14)** Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 70 000 /յոթանասուն **հազար/ ՀՀ դրամ**.

**15)** համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 10 000 /**տասը հազար/ ՀՀ դրամ**.

**16)** համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 200 000 /**երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ**.

**17)** համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 750 000 /**յոթ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ,**

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 1 500 000 /**մեկ միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ,**

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 2 100 000 /**երկու միլիոն մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ**,

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 3 000 000 /**երեք միլիոն/ ՀՀ դրամ**

# ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1500 /մեկ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ,

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1500 /մեկ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ,

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝1500 /մեկ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ,

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝1000 /մեկ հազար/ ՀՀ դրամ,

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1000 /մեկ հազար/ ՀՀ դրամ,

6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝1000 /մեկ հազար/ ՀՀ դրամ,

7) համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը ՝

ա.կենցաղային աղբի համար յուրաքանչյուր ամիս՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար վճար՝ ամսական 50 /հիսուն/ ՀՀ դրամ,

բ. ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 1000 /մեկ հազար/ ՀՀ դրամ,

գ. առևտրի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացնող շինությունների համար յուրաքանչյուր ամիս ՝ 1000 /մեկ հազար/ ՀՀ դրամ,

դ. հանրային սննդի շինությունների համար յուրաքանչյուր ամիս ՝ 3000 /երեք հազար/ ՀՀ դրամ,

ե. կրթական, մշակութային, առողջապահական և նմանատիպ այլ հասարակական շինությունների համար յուրաքանչյուր ամիս ՝ 2000 /երկու հազար/ ՀՀ դրամ,

ե. արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով՝ 1քմ մակերեսի համար յուրաքանչյուր ամիս ՝ 15 /տասնհինգ/ ՀՀ դրամ,

**8**) համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար աղբահանության վճար՝ ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի մեկ խորանարդ մետրի համար սահմանված դրույքաչափի 20 %-ի չափով՝ 200 / երկու հարյուր/ ՀՀ դրամ,

**9)** համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց ՝ 2500 /երկու հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ,

**10)** համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ 500 /հինգ հարյուր/ ՀՀ դրամ փոխհատուցման վճար:

**Համայնքի ղեկավար՝** **Բորիս Բարոյան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 sarchapet.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N-13-Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով՝

***ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.***

Հաստատել Սարչապետ համայնքի 2018 թվականի բյուջեն՝ համաձայն հատվածների:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԴԱԼՅԱՆ ԲԱՐՍԵՂ
2. ԱՎԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ
4. ԳԻՆՈՅԱՆ ՄԿՐՏԻՉ
5. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԱՐԳԱՐ
6. ԴԱՎԹՅԱՆ ԳԵՎՈՐԳ
7. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՌԱՖԻԿ
8. ՄԽՈՅԱՆ ՋԱՎԵՆ
9. ՏՈՄԵՅԱՆ ՀՈՎԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 sarchapet.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N-14-Ա

## ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ մասի և հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի Սարչապետ համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 02-Ն որոշմամբ ընդունված ավագանու կանոնակարգի 44-րդ, 45-րդ և 46-րդ կետերը՝ ***ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.***

1. Ստեղծել ավագանու մշտական հանձնաժողով հետևյալ կազմով՝
   1) Արմեն Բաղդասարյան
   2) Բարսեղ Ավդալյան
   3) Արմեն Ավետյան
   4) Ռաֆիկ Մարտիրոսյան
   5) Վերջալույս Փնջոյան
2. Հանձնաժողովն իր գործառույթները իրականացնում է համայնքի ավագանու կանոնակարգի համաձայն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԴԱԼՅԱՆ ԲԱՐՍԵՂ
2. ԱՎԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ
4. ԳԻՆՈՅԱՆ ՄԿՐՏԻՉ
5. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԱՐԳԱՐ
6. ԴԱՎԹՅԱՆ ԳԵՎՈՐԳ
7. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՌԱՖԻԿ
8. ՄԽՈՅԱՆ ՀԱՎԵՆ
9. ՏՈՄԵՅԱՆ ՀՈՎԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 sarchapet.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N-15-Ա

### ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Համայնքային ծառայության մասին> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով՝

***ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.***

1. Սարչապետ համայնքի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմում ընդգրկվող ավագանու անդամների թիվը սահմանել հինգ և հանձնաժողովների անհատական կազմում ընդգրկել ավագանու հետևյալ անդամներին՝

1. Զավեն Մխոյան

2. Գևորգ Դավթյան

3. Վերչալույս Փնջոյան

4. Արմեն Ավետյան

5. Արմեն Բաղդասարյան

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԴԱԼՅԱՆ ԲԱՐՍԵՂ
2. ԱՎԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ
4. ԳԻՆՈՅԱՆ ՄԿՐՏԻՉ
5. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԱՐԳԱՐ
6. ԴԱՎԹՅԱՆ ԳԵՎՈՐԳ
7. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՌԱՖԻԿ
8. ՄԽՈՅԱՆ ԶԱՎԵՆ
9. ՏՈՄԵՅԱՆ ՀՈՎԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 sarchapet.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 6-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԻՄՔԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով, <Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին> ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, ՀՀ ՀՕ 60-րդ և 64-րդ հոդվածներով, <Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգամիճակի մասին> ՀՀ ՀՕ 510-Ն օրենքով, <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ՝

*ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.*

1. Օրնքի ուժով 06-100-0038-0008 ծածկագրի տակ գտնվող 0.0828 հա փաստացի օգտագործվող հողամասի նկատմամբ ճանաչել Էդիկ Սերոբի Խաչատրյանի, Մետաքսյա Ժորայի Մխոյանի, Վարդուհի Էդիկի Խաչատրյանի և Գևորգ Էդիկի Խաչատրյանի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը:
2. Հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, հողամասի սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և (կամ) չի առաջացնում սերվիտուտ:
3.Վերականգնել և ճանաչել 0.0828 հա բնակելի տան կառուցման և սպասարկման հողամասում գտնվող այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը չխախտող, անձանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական իրականացրած և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող 1938 թվականին կառուցված բոլոր շենք շինությունեի նկատմամբ Էդիկ Սերոբի Խաչատրյանի, Մետաքսյա Ժորայի Մխոյանի, Վարդուհի Էդիկի Խաչատրյանի և Գևորգ Էդիկի Խաչատրյանի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը համաձայն <ՄԵԼ ԵՎ ՄԻԼ> ՍՊԸ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
4.Հողամասի սահմանները որոշվում եմ համայքնի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
5. Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե՝ փողոց 1, տուն 73:

**Համայնքի ղեկավար՝** **ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ**

20.12.17 թ.
գ.Սարչապետ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 sarchapet.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 7

### ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ, ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն <Բյուջետային համակարգի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի և առաջնորդվելով Սարչապետ համայնքի ավագանու 29 դեկտեմբերի 2017 թվականի <Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնքի 2018 թվականի բյուջեն հաստատելու մասին> թիվ 13-Ն որոշմամբ՝

*ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.*

Հաստատել Սարչապետ համայնքի 2018 թվականի բյուջեի եկամուտների և ծախսերի եռամսյակային բաշխումը /հավելված 1,2/:

**Համայնքի ղեկավար՝** **ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ**

2017 թ. դեկտեմբեր 29
գ.Սարչապետ